ֆիլները վանքի անունով փոխառութիւններ կ'ընէին և իրակա-նին մէջ իրենց պէտքերուն կը մսխէին։ Կոլոտ այս կարգա-դրութիւններէն յետոյ, կը դառնայ Պոլիս և կը նկարագրէ Ս. Յակոբի վանքին խղճալի վիճակը մահտեսայ և ամիրաներուն, որոնց առաջարկին վրայ՝ Կոլոտ 1715ին կ'ստանձնէ Կ. Պոլսի պատրիարքութիւնը և հետևեալ օրն իսկ կը բաժնէ Ս. Յակո-բի վանքին պատրիարքութիւնը Կ. Պոլսի պատրիարքութենէն և մայրաքաղաքի եկեղեցիներուն մէջ եւ ի պատարագն յիշատակեալ Սուրբ Երուսաղէմի պատրիարք զտէր Գրիգոր Աստուածաբան վրդ.ն. յետոյ Կոլոտ գնալով Ադրիանուպոլիս, Սուլթան Մահմուտէն հրովար-տակ կ'ստանայ թէ՛ իրեն և թէ՛ Շիրուանցի Գրիգոր պտրք.ին համար։ 1716ին մեծահանդէս սիւնհոդոս մը կը դումարէ և երկու ա-թոռներու բաժանումը գլուխ հանելով՝ կը հաղորդէ Աստուածա-տուր կթղ.ին. որ հաւանելով այս որոշման կը գրէ Գրիգոր վրդ. Շիրուանցիին ի Մուշ, որպէսզի ընդունի Երուսաղէմի պա-տրիարքութիւնը։ Կոլոտ եպս. կը ձեռնադրուի Պոլսի մէջ Ուլնեցի Կարապետ կթղ.էն որ արդէն 1726ին Պոլսոյ Մայր-եկեղեցիին մէջ կաթողիկոսական օծումը ընդունած էր 12 եպիսկոպոսներէ։ Կոլոտ ցորչափ ապրեցաւ սրտակից օժան-դակը եղաւ Շղթայակիրին. մանաւանդ պարտուց վճար-ման և Ս. Յակոբի բարեզարդութեան համար։ Կոլոտ 250 ստո-բագրութիւններով դիմումներ կատարեց Զուղայի Ամենափրկչի վանքին առաջնորդ Մովսէս Զուղայեցիին (1706—1725), տե-ղեկագրելով թէ արագ կարգադրութիւններ կատարուած են Ս. Յակոբի վանքի մասին, և այդ առթիւ ալ կը նկարագրէր տեղակալներու գեղծումները և Ս. Երուսաղէմի պարտքին 400 քսակի բարձրանալը։ Կոլոտի արդիւնական կեանքին և այլ գործունէութիւններու մասին աւելի ընդարձակ տեղեկութեան համար տեսնել Բաբգէն Ս. Եպս. Կիւլէսէրեանի Կոլոտ Յովհան-նէս պատրիարք խորագրով ուսումնասիրութիւնը։

Ս. Յակոբի վանքի գանձատան մէջ Կոլոտի յիշատակներէն կը գտնուի թանկարժէք Բնագիրք մը (տիպտիկոն) (Diptyques), *կրկին Խաչելութեան պատկերներով և կիտուածանկար. որ ըստ հը-նասիրաց, գեղարուեստական գանձ մը կը նկատուի, Պոլսեցի հայ վարպետներ նուիրած են Կոլոտի՝ այդ Բնագիրքը 1732ին, և ինքն ալ՝ իր կարգին նուիրած է Ս. Յակոբի վանքին։*